Հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր
պրոֆեսոր Սրբուհի Գևորգյան

ԿԱՐՈՐ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2023 թ. մարտի 9-ի նիստի

ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱ ԷԻՆ. Ամբիոնի վարիչ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Ստեփանյանը, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը, Մ. Մարտիրոսյանը, դասախոս Միքայել Բաղալյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Պապոյանը:

ԼՍԵՑԻՆ. Սարգիս Մատթեոսի Մկրտչյանի «Պանթիւրքիզմը եւ Իրանը (պատմութիւն, գաղափարախօսութիւն, քաղաքականութիւն)» պատմական գիտությունների թեկնածուի հայցման ատենախոսության (գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր Գ. Ս. Խուդինյան) քննարկումը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը, պատմական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը:

Քննարկման մասնակիցները համակարծիք էին, որ Սարգիս Մատթեոսի Մկրտչյանի «Պանթիւրքիզմը եւ Իրանը (պատմութիւն, գաղափարախօսութիւն, քաղաքականութիւն)» ատենախոսության թեման արդիական է, ունի գիտական ու գործնական կարևոր նշանակություն:

Պանթյուրքիզմի գաղափարախոսությունը ծագել է 19-րդ դարի վերջին Ցարական Ռուսաստանում, իսկ ավելի ուշ տարածվել է Օսմանյան կայսրությունում: Այս գաղափարախոսությունը Օսմանյան կայսրության, ապա՝ Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում ենթարկվել է կերպափոխությունների և ներկայումս ևս հանդիսանում է թուրքական պետական գաղափարախոսության ու

քաղաքականության մի մասը: Այն ենթադրում է Թուրքիայի գլխավորությամբ կամ հովանու ներքո միավորել թյուրքախոս ժողովուրդներին: Պանթյուրքիզմը իր դրսևորումներն է ունեցել նաև Իրանում, մասնավորապես արտաքին գործոնների ազդեցությամբ: Մյուս կողմից այն օգտագործվել և շարունակում է օգտագործվել Իրանի դեմ՝ սպառնալով նրա տարածքային ամբողջականությանը:

Թեկնածուական ատենախոսության թեմայի արդիականությունը, ատենախոսի հիմնավորմամբ, անմիջապես կապ ունի պանթյուրքիզմի գաղափարախոսության այն նոր կերպափոխությունների հետ, որոնք մի կողմից օգտագործվում են ԻԻՀ-ի, իսկ մյուս կողմից՝ ՀՀ-ի դեմ: Բացի այդ, պանթյուրքիզմի գաղափարախոսությունը և դրան միտված քաղաքականությունը նկատելի է ոչ միայն Թուրքիայի, այլև՝ Ադրբեջանի գործողություններում, որը ներկա տարածաշրջանային գործընթացներում ավելի մեծ կարևորություն է հաղորդում դրան:

Ատենախոսը հիմնավորել է նաև հետազոտության գիտական նորույթը: Այստեղ կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական մոտեցումները.

- Իրանի հյուսիս-արևմտյան նահանգներում թյուրքախոս բնակչության ինքնության հարցի համակարգված քննությունը՝ պատմական, լեզվամշակութային և տնտեսական տեսանկյուններից,
- Իրանում գործող պանթյուրքիստական կազմակերպությունների ձևավորման գործընթացի, գործունեության և գաղափարախոսության համակարգված ուսումնասիրությունը,
- Իրանում գործող պանթյուրքիստական կազմակերպությունների հակահայկական նպատակների բացահայտումն ու Արցախյան 44-օրյա պատերազմում նրանց ունեցած դերակատարության լուսաբանումը:

Ատենախոսը հստակորեն ձևակերպել է հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսն օգտագործել է հարուստ գրականություն՝ փաստաթղթեր, համացանցային նյութեր, մամուլի հրապարակումներ, հայ, իրանցի և այլ հեղինակների աշխատություններ: Մի շարք կարևոր փաստաթղթեր գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Պետք է նշել ատենախոսության թեմայի կիրառական նշանակության մասին: Հատկապես Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Իրանում տեղի ունեցող

պանթյուրքական կազմակերպությունների աննախադեպ ակտիվացումը, մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական վտանգավոր զարգացումների ընթացքը և դրանց հակահայկական էության բացահայտումն ու կանխարգելումը նոր մարտահրավերներ է առաջ բերում հայկական պետականության անվտանգության համար: Ատենախոսության տեղեկատվական նյութը, եզրակացությունները կարող են օգտակար լինել այդ խնդիրներով զբաղվող համապատասխան գերատեսչությունների համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հապավումների ցուցակից, Իրանը թիրախ ընտրած պանթյուրքական կազմակերպությունների ցանկից:

Ներածությունում հեղինակը համակարգված ներկայացրել է թեմայի ուսումնասիրման արդիականությունը, կարևորությունը, առաջադրված խնդիրները, նպատակները, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Պանթյուրքիզմի ձևավորումը և Իրան ներթափանցելու փորձերը», նախ ներկայացված է Իրանի տարածքների և մշակույթի յուրացումը թյուրքական ցեղերի և պետական կազմավորումների կողմից մինչև պանթյուրքիզմի ձևավորումը: Ապա խոսվում է 20-րդ դարի առաջին կեսին Իրանի տարածքների հանդեպ պանթյուրքական հավակնությունների, գաղափարաքաղաքական ներփափանցումների, ինչպես նաև Իրանի կողմից ցուցաբերված հակազդեցությունների մասին: Ատենախոսն այս գլխում առանձին անդրադառնում է նաև պանթյուրքիստների միջոցով այսպես կոչված Հարավային Ադրբեջանի ազատագրման և «երկու Ադրբեջանների» միավորման խորհրդային փորձին:

Երկրորդ գլխում՝ «Պանթյուրքիզմը՝ Իրանի դեմ ուղղված աշխարհաքաղաքական նկրտումների համաձիրում (20-րդ դարի երկրորդ կես – 21-րդ դարի սկիզբ)»՝ ատենախոսը նախ ներկայացվում և վերլուծում է պանթյուրքիզմի կերպափոխումները Թուրքիայի՝ արևմտյան և Իրանի՝ հակաարևմտյան դիմադարձումների համատեքստում: Այնուհետև հեղինակը քննության է ենթարկում Իրանի Ատրպատական նահանգի թյուրքախոս բնակչության ինքնության հարցը և եզրակացնում, որ իրանական մտածողություն ունեցող Ատրպատականի ազերի

մտավորականները հակադրվում են պանթյուրքիստական մտածողություն ունեցող և պանթյուրքիզմի շահերը սպասարկող պանազերիստներին:

Երրորդ գլխում, «Պանթյուրքական կազմակերպությունների ձևավորումն ու գործունեությունը Իրանում և նրա շուրջ (1991-2021)», որն ըստ հեղինակի, ատենախոսության ամենակարևոր գլուխն է, ներկայացվում են Իրանական ծագում ունեցող պանթյուրքական կազմակերպությունների ընդհանուր բնութագիրը, նրանց ծրագրերը, գործունեության ձևերը: Առանձին անդրադարձ է կատարվում Արցախյան 44-օրա պատերազմում Իրանում գործող պանթյուրքիստական կազմակերպությունների ունեցած դերին:

Եզրակացությունների բաժնում ամփոփված են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Նիստի մասնակիցները դրական գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և պատասխանատու աշխատանքը՝ միաժամանակ արտահայտեցին մի քանի դիտողություններ և նկատառումներ, որոնց հաշվի առնելը կարող է հետագայում օգտակար լինել աշխատանքի լրամշակման գործում.

1. Ատենախոսության «ներածություն» բաժնի օգտագործված գրականության վերլուծություն հատվածում հեղինակը հիմնականում թվարկում է աղբյուրները, փաստաթղթերը և թեմայի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարած հեղինակներին: Կարծում ենք, աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը չսահմանափակվեր դրանք թվարկելով, այլև՝ ենթարկեր վերլուծության, մասնավորապես հեղինակների առաջ քաշած տեսակետները և նրանց հիմնարար աշխատությունները:
2. Ատենախոսության մեջ հեղինակը պանթյուրքիզմի գաղափարները ներկայացնում է ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի վարած քաղաքականության համապատկերում, ուստի այս առումով հարկավոր էր վերլուծել և ներկայացնել Ահմեդ Աղանի և Ալի Հուսեինզադեի գաղափարները, հատկապես, որ այս երկու գործիչներն էլ զգալի ազդեցություն են թողել

պանթյուրքիզմի գաղափարախոսության ձևավորման և տարածման վրա և նպաստել դրա տարածմանը Ադրբեջանում:

3. Թեկնածուական ատենախոսության 55-րդ էջում հեղինակը նշում է հետևյալը. «...Եւ թէեւ ԽՍՀՄ-ի ուղղակի ու անմիջական ռազմաքաղաքական ճնշման պայմաններում Իրանը ստիպուած էր հրաժարուել ապստամբներին աջակցելու իր քաղաքականութիւնից, իսկ քիչ անց՝ տարածքային փոխանակութիւններով աւելի լայն ճանապարհ տալ պանթիւրքիստներին դէպի Նախիջեւան...»: Այստեղ հասկացվում է, որ ԽՍՀՄ-ի ճնշման ներքո է Իրանը Թուրքիայի հետ տարածքային փոխանակումներ կատարել, որով վերջինս ելք է ունեցել Նախիջևան: Նման մոտեցումը պահանջում է ավելի լուրջ հիմնավորումներ՝ աղբյուրների ու փաստաթղթերի տեսքով:
4. Ատենախոսության նույն՝ 55-րդ էջում, Ռեզա շահի կողմից Պարսկաստան անունը Իրան անվանումով փոխարինելու հետ կապված հեղինակը գրում է. «Սրա տակ թաքնուած էր պանթիւրքիստների ազդեցութիւնը թուլացնելու համար անհրաժեշտ արդիականացման մի ամբողջ նախագիծ...»: Տպավորությունն այնպիսին է, որ անվան փոխումը կապված է պանթյուրքիստների գործունեության հետ: Սակայն իրականում դրանով Ռեզա շահը լուծում էր ներքին ու արտաքին քաղաքական մի շարք կարևոր խնդիրներ, մյուս կողմից՝ 1930-ական թթ. պանթյուրքական շարժումը լայն տարածում չուներ:
5. Ատենախոսության 71-րդ էջում հեղինակը՝ խոսելով Ա. Թյուրքեշի մասին, նշում է, որ նա է ստեղծել Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցությունը, սակայն այս կուսակցությունը հիմնադրվել է 1958 թ. Օսման Բյոլյուքբաշի կողմից, իսկ Թյուրքեշը կուսակցությանն անդամակցել է 1965 թ.:
6. Թեկնածուական ատենախոսության երկրորդ գլխի առաջին, երկրորդ և չորրորդ ենթահարցերը սահմանափակ են ներկայացված: Այսպես՝ առաջին ենթահարցում՝ «Պանթիւրքիզմի կերպարանափոխումները Թուրքիայի՝ արեւմտեան եւ Իրանի՝ հակաարեւմտեան դիմադարձումների համատեքստում (Սառը պատերազմից մինչեւ Խորհրդային Միութեան փլուզում)», պանթյուրքիզմի կերպարանափոխումների մասին խոսելիս հեղինակը չի անդրադառնում դրանց ինստիտուցիոնալացմանը և Թուրքիայի քաղաքական

համակարգի մաս կազմելուն: Մյուս կողմից, գրեթե անդրադարձ չկա Իրանի հակաարևմտյան գործողությունների համատեքստում պանթյուրքիզմի գաղափարներին կամ Արևմուտքը (նաև հակահիրանական տարբեր ուժեր ու կենտրոններ) ինչպես է այս գաղափարախոսությունն օգտագործում Իրանի դեմ պայքարում: Մյուս կողմից ներկա աշխարհաքաղաքական զարգացումները նկատի ունենալով, կարծում ենք, ատենախոսը պետք է ավելի համակողմանի անդրադառնար Իրան-Ադրբեջան հարաբերություններին 1991-2021 թթ.՝ նկատի ունենալով ներկայիս Ադրբեջանի ղեկավարության հոետորաբանությունն ու քաղաքական ծրագրերը Իրանի թյուրքախոսների հետ կապված:

7. Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են 2-3 էջանոց ենթագլուխներ, որոնց իրենց բովանդակությունից ելնելով կարելի էր ընդգրկել գրեթե նույն խնդիրը քննարկող այլ ենթագլուխների մեջ:
8. Ատենախոսության 121-րդ էջում հեղինակը, խոսելով ՀԱԱՋՇ-ի և Թուրքիայի իշխանությունների միջև կապի մասին, սահմանափակվում է Լ. Խուրշուդյանի խոսքերը մեջբերելով, այն դեպքում երբ կոնկրետ օրինակներ էր հարկավոր ներկայացնել՝ հանդիպումներ, հրապարակումներ և այլն:
9. Ատենախոսության մեջ նկատելի է հեղինակի ավելի շատ իրանամետ դիրքորոշումը և գնահատականները, որը որոշ դեպքերում, մասնավորապես Ցարական Ռուսաստանի, ապա՝ ԽՍՀՄ-ի վարած քաղաքականության վերաբերյալ, ամբիոնի կարծիքով, թույլ չի տվել նրան ավելի լայն դիտանկյունից դիտարկել խնդիրները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը, քննարկելով Սարգիս Մատթեոսի Մկրտչյանի «Պանթիւրքիզմը եւ Իրանը (պատմութիւն, գաղափարախօսութիւն, քաղաքականութիւն)» խորագրով թեկնածուական ատենախոսությունը, գտնում է, որ այն լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, ուստի ամբիոնը երաշխավորում է ատենախոսության հրապարակային պաշտպանությունը ԵՊՀ Պատմության ֆակուլտետում գործող ԲՈԿ-ի 069 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում, իսկ

ատենախոսն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ պ. գ. դ., պրոֆեսոր Խ. Ստեփանյան

Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՊՄՀ գիտքարտուղար Դանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Մ. Իսպիրյան

09.03.2023 թ.